

1.2.6. Կապ

Հայաստանի Հանրապետությունում 2004թ. հունվար-օգոստոսին բնակչությանը, հիմնարկներին, կազմակերպություններին մատուցած ծառայություններից ստացված հասույթի ընդհանուր ծավալը ընթացիկ գներով կազմել է 42739.8¹ մլն.դրամ, որը 2003թ. հունվար-օգոստոսի նկատմամբ համադրելի գներով աճել է 18.1%-ով: Նշված հասույթից բնակչությանը մատուցված ծառայությունների բաժինը կազմել է 22770.1 մլն. դրամ, որը 2003թ. հունվար-օգոստոսի նկատմամբ համադրելի գներով աճել է 16.6%-ով:

¹ Հաշվարկված է առանց ավելացված արժեքի հարկի: